

կան գրեանցն թիֆլիզու : Զոր զնեաց ի գերողացն՝ նախագրեալ Յարութիւնին որպի՛ քաջցրապտուզ ծառն՝ շառաւիղեալն ի բարի արմատոյ՝ բարեպաշտօն վաճառականն Մարտիրոս՝ իրեւ զդեղեցիկ եւ զմենծազին մարգարիտ : Եւ ընծայեաց մեծաւ սիրով ի ձեռս վերոյդեալ երջանիկ Առաջնորդին՝ առ ի լինել հողեւոր յիշատակն իւրն եւ իւրայնոցն ամենեցուն ի որ. Աթոռս Թօմայի սրբազնն Առաքելոյն : Կամեցեալ սովոր. Ժառանգել զերանին Եսայեայ կայծակնամաքուր մարդարէն , որ առէ . «Երանի , որ ունիցի յիշատակ ի Սիօն եկեղեցի» : Ապախնդիրի ի միաբանիցդ մեծի Աթոռոյո՞ւ որք ընթեռնուքն զայս որ. Աւետարանս, յիշել ի բարին՝ զԱզութեցի Տուահնց Յարութիւնեան Մարտիրոս վաճառականն եւ զծնողոն , եւ զորդիսն , եւ զհամօրէն աղդայինս նորա զկենդտոնիս եւ զննջեցեալս : Զօրս զամենեսեան օրհնեցէ Վա . հատուցանելով բազմապատիկ վարձս՝ հողեւորապէս եւ մարմնաւորապէս եւ յիշեցէ որպէս զաւակն , յորժամ զայ արքայութեամբ իւրով . ամէն :

Գրեցաւ յիշատակաց բանս . ի թուականիս մերում ՌՄԵԵ . յամսեանն յունուարի ԺԲ , ի յԱռաքելական հրաշազարդ որ. Աթոռս Թովմայի՝ որ ի գիւղաքաղաքս Ազուլիս :

Ազուլիս .

Արտագրեց՝ ՅԱՐՈՒԹԻՒԽԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

## ԳՐԱԿԱՆ ՀԱՆԹԱԺԻՍԱՆԵՐԻ ՊՈՅՈՒԹԻՒՆՆ ԱՅԺՄԵԱՆ ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ

Գրական շանթաժիսաների դոյութիւնն այժմեան համաշխարհային մամուլի մէջ գրականութեան անչուշտ ամենաախուր երեւոյթներից մէկը պէտք է համարուի :

Մասնաւորապէս եւրոպական մամուլի մէջ այսպէս անուանուած «գրական շանթաժիսաները» այժմ. դժբաղդարար, մեծ դեր են խաղում, եւ նրանց լեզիօնը օրէցօր բազմանում է : Այդ լեզիօնը մի տեսակ ոյժ է կազմում, որի հետ հարկաւոր են համարում կուռել նոյն իսկ յարգելի հիմնարկութիւններ ու անձեր : Նանթամք փոքր առ փոքր մուտք է գործում եւ հայ մամուլի մէջ , եւ այդ շատ հասկանալի է : որովհեաեւ շանթաժիսանունն իրող արարածները կենդանաբանական դասակարգութեան մէջ ամենաատարածուած տեսակներից մէկն են համարուում : Այդ ցեցերից ազատ լինելու համար շատ անդամ հարկաւոր է լինում ոչ թէ միայն բարեխնդութիւն, այլ եւ մի անսակ ուղիղ ինստինկտ եւ հեռատեսութիւն : Խմ կարծիքով, մինչեւ անզամ եւ բարեխիզմ պարբերական օրդանները, դոնէ մի առ ժամանակ , զոհ են դառնում գրականութեան այդ ցեցերի ստոր հաշիւներին : Դարձնել մամուլը զէնք տնհնա-

կան նպաստելների, ստոր ձգառմների համար : չխնայելով ոչ մի անազ-նիւ միջոց իրագործելու համար այդ նպատակները, ահա գրական շան-թաժիստների յատկութիւնը : Իբրև պասկվիլիանաներ եւ չարախօսներ, շանթաժիստները սակագույն են մի տեսակ տերրոր (սարսափ) ամեն մի շրջանի մէջ, որի հետ նրանք չփուլմ են, եւ չատերը վախենում են նը-րանցից : շողոքորթում են նրանց, աշխատելով մի կերպ ազատուել նրանց չարամտութիւններից եւ անազնիւ յարձակումներից :

Գրականութեան ամեն մի ասպարիզում դրանք մուտք են գանում եւ գործում ըստ ցանկացածին : Երբ այդ ցեցերը, դիցուք, սեցենզենա- են լինում, նրանք պահանջում են, որ իրենց շողոքորթեն, ճոխ ընթ-րիքների հրաւիրեն, նոյն իսկ փորով կաշառեն, որպէսզի պիկների ու գերասանների մասին աննպաստ կարծիք չյայտնեն լրագրում ու այդ-պիսով չվկասեն թէ թատրոնին ու թէ գերասաններին : Երբ սկսուեց Պանամայում ջրանցք ստեղծելու համար յայտնի մեծ գործը, շանթա-ժիստներին կաշառում էին, որպէսզի նրանք լաւ նպաստաւոր ու քա- ջալերով կարծիք յայտնէին լրագրութեան մէջ այդ ջրանցքի ապազայի մասին եւ այդպիսով կապիտալ օրսային յիշեալ զործի անազնիւ եւ ա- գան հիմնարկողների համար : Երբ շանթաժիստը կրիտիկոսի զեր է խա- զում, չատ գրողներ, առաւել նոր ու անյայտ գրողներից, աշխատում են նրա համակրութեանն արժանանալ, որպէսզի չհնթարկուեն անողոք եւ անխիզն քննադատութեան :

Գրականութեան այդ ցեցերը տերորի են մատնում եւ բոլորովին մասնաւոր անձանց : Մի այդպիսի շանթաժիստ օրինակ ցանկանում է ամուսնանալ մի օրիորդի հետ, բայց մերժում է սաանում թէ ծնողնե- րի, թէ նոյն իսկ օրիորդի կողմից, եւ ահա լի սատանայական վրէժ- խնդրութեամբ նա մի սարսափելի պասկվիլ է դրում խեղճերի դէմ : Մի յարդելի փաստաբան դիցուք թէ մի որեւէ գործում իսօնել է շանթա- ժիստի բարեկամի դէմ եւ ահա զրականութեան ցեցը դարձեալ դիմում է զանազան ստոր միջոցների եւ տպագրական խօսքով ամեն կերպ աշխա- տում է նսեմացնել յիշեալ փաստաբանի անունը եւ վարկը : Մի բժիշկ հնար չի գտել օրերով մնալ շանթաժիստի հիւանդ ազգականի մօտ եւ ահա այդ «յանդուզն» բժշկի դէմ շանթաժիստը գործում է մի սարսափե- լի արշաւանք զինուած ստոր թիւնների եւ զրաբարութիւնների մի ամ- բողջ արսենալով : Այս ինչ բանկը չի կամեցել իւր զիրեկտորի միջո- ցով խոչըր կաշառք տալ յայտնի շանթաժիստին եւ վերջինս ի հարկէ ոչինչ չէ խնայում, որպէսզի տպագրական խօսքով կասկած յարուցանի բանկի դէմ եւ մատնի նրան կրիզիսի :

Ինչպէս վերեւ յիշեցինք, չատ անզամ նոյնիսկ բարեխիզն օրգան- ները շանթաժիստաների զոն են զառնում եւ դա չատ հասկանալի է : զը- րականութեան այդ ցեցերը գրում են իբր թէ յանուն բարձր գաղա-

փարների, նրանք հարկ եղած դէպքում ընդունակ են թափել կոկորդիռուսի արտասունքներ եւ բանեցնել քաղցր լեզու. իի մարդասիրական զգացումնքներով: Մերթ պատահում է, որ այս կամ այն դէպքից իր թէ յուզուած շանթաժխանները խօսում են կծու ու թունաւոր լեզուով: Ո՞վ կարող էր կարծել, որ հոչակաւոր Միրարոն, այդ թունդ յեղափոխականը, այդ հուեաորը, Փրանսիական այդ փայլուն աազանդը ծածուկ կերպով նոպաստ է ստանալիս եղել թագաւորից, այն Միրարոն, որի արձանը Փրանսիական հասարակապետութիւնը բազմեցրել էր Պաթէօնում, Երբ յայտնուեց, որ մեծն Միրարոն, յեղափոխական Միրարոն եւս կաշառուած է եղել անբաղդ թագաւորից, նրա արձանը դուրս չըպրտեցին Պանթէօնից: Նոյն իսկ Միրարոյի մէջ էլ ուրիմն որոշ չափով շանթաժխանի ովկի է եղել:

Շանթաժխանների սասութիւնների ու զրոյարատութիւնների դէմ աշ-պագրական խօսքով կոռուել շատ դժուար է: Դուք հներքէք մի սռւա: Նրանք կհնարեն տասը սռւա: Երբ մարդ չունի ոչ խիզճ եւ ոչ ամօթ, ստեր եւ զրոյարատութիւններ հնարել կարող է անվերջ: Եւ այդ է պատճառը, որ ոմանք իրենց պահիւը շանթաժխաններից պաշտպանելու համար զիմում են հասարակութեան մէջ ընդունուած այլ միջոցների: Թէեւ մամուլը նախատում է այդ միջոցները:

Կար ժամանակ. Երբ տպագրական խօսքը զրեթէ սռւրը էր համարւում: այժմ էլ հէնց հասարակ մողովուրդը մի առանձին հաւատով եւ յարդանքով է վերաբերում ամեն մի ապուած առջի: Շնորհիւ զանազան դրական արկածախնդիրների եւ շանթաժխանների, որոնք մամուլի մէջ մացցրին ամեն տեսակ կեղտութիւն, այժմ զրականութեան եւ առհասարակ տպագրական խօսքի վարկը բաւական ընկել է: Շանթաժխանները խողերի նման մտան դրականութեան տաճարը, տպականեցին այն եւ դարձրին աղբանոց:

Երանի այն զեկավարողներին, զրականութեան ծառայող այն գործիչներին, որոնք կարողանում են մաքուր պահել իրենց տաճարը այդ խողերի արշաւանքից:

Փայլուն խօսքերն ընդունակ են, ի հարկէ, շլացնելու շատերին եւ պատահում է, որ բարեխիզճ պարբերական օրդաններն անդամ սխալւում են եւ շանթաժխաններին գործիչների անդ են գնում: Անբարեխիզճ օրդանները, ի հարկէ, զիտակցարար են ընդունում դրականութեան այդ ցեցերին իրենց գիրկը եւ այս պատահում է աւելի յաճախ:

Շանթաժխանները դրականութեան վեսակար բացիներ են, բացիներ, որոնց դէմ կոռուելը սռւրը գործ պէտք է համարուի:

(«Նոր-Դար»)

ԲԺ. Ի. ԶՈՒՐԱԲԵԼԻՆ